


Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի
մարզային փուլի – 2025-2026 ուս. տարի
/տևողությունը – 120 րոպե/
11-12 դասարան

- 1. Պնդումներից յուրաքանչյուրի համար նշել՝ ճիշտ է, թե՛ սխալ** 2միավոր
- ա. Արարատյան դաշտի արտեզյան ջրերն ավելի արագ են օգտագործվում, քան համալրումն է:
բ. Արարատյան դաշտի ստորերկրյա ջրերի մեծ մասն օգտագործվում է ոռոգման նպատակով:
գ. Ոռոգչական ջրանցքների ամենախիտ ցանցը Շիրակի դաշտում է:
դ. Արարատյան դաշտում պոմպակայանների շահագործումը թույլ կտա նվազեցնել Սևանա լճից ջրառը:
ե. Սննդի արդյունաբերության արտադրանքի ծավալով առաջատար են զարգացած երկրները:
զ. Ոչ ակոհոլային խմիչքների և կաթնամթերքի արտադրությունը տեղաբաշխվում է սպառման շուկաներին մոտ:
է. Արտադրական կապիտալի արտահանումն ունի Հյուսիս-Հարավ ուղղվածություն:
ը. Մեքենաշինական արտադրությունների արտահանման հիմնական ուղղությունը Հարավարևելյան Ասիան է:

- 2. Նկարագրով որոշել պետությունը** 1միավոր
- ՄԵՐԿՈՍՈՒՐ-ի լիիրավ անդամ այս ներգամաքային դիրք ունեցող երկրի բնակչության մոտ 90%-ը դեռևս խոսում է գուարանի լեզվի տարբեր բարբառներով: Չնայած թույլ զարգացվածությանը՝ երկիրը ջրային էներգետիկայի արտահանմամբ աշխարհի առաջատարներից է:

- 3. Գլոբալ Հյուսիսի և Գլոբալ Հարավի միջև բաժանարար գծի գաղափարի հեղինակն է** 1միավոր
- ա. Կարլ Մարքս բ. Դավիթ Ռիկարդո
գ. Վիլի Բրանդտ դ. Գրու Բրունթլան

- 4. Օգտվելով քարտեզի Ա-Բ առանցքից՝ գծեք այդ հատվածում ռելիեֆի կտրվածքը (1միավոր) և պատասխանեք հարցերին**



ա. Որքա՞ն է բարձրությունների առավելագույն անկումը Ա-Բ գծի հատվածում **(0.5միավոր)**

բ. Որքա՞ն է հորիզոնականների կտրվածքը **(0.5միավոր)**

գ. Որքա՞ն է Ա-Գ հատվածում ռելիեֆի թեքությունը արտահայտած մ/մ միավորով **(1միավոր)**:

5. Խնդիրներ

ա. Ա երկրի բնակչության թիվը 20մլն մարդ է, բնական աճը՝ 0.1%, իսկ մեխանիկական աճը՝ 30000մարդ: Հաշվի առնելով, որ այդ երկրում մեկ շնչի հաշվով էներգասպառումը 3000կՎտ-ժամ է՝ որքան տոննա պայմանական վառելիք է հավելյալ օգտագործվելու այդ երկրում **1միավոր**

բ. Որքա՞ն կկազմի արևի ճառագայթների անկման անկյունը Երևանում հունիսի 22-ին, եթե Երկրի առանցքի թեքությունը լինի 25°: **1միավոր**

6. Թվարկել

ա. ՆԱԵԿ-ի անդամակցությունը դադարեցրած չորս երկիր **1միավոր**

բ. Ոչ նահանջ տարում չորս ամսաթիվ, երբ հս.լ. 1^o գուգահեռականի վրա կեսօրին արևի ճառագայթների անկման անկյունը 88^o է: **1միավոր**

7. ՄԱԿ փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի պաշտոնական տվյալներով 2024թ. դրությամբ ՄԱԿ մանդատի ներքո փախստականների 67%-ը ընդամենը 5 երկրից էին: **Դասավորել դրանցից չորսը ըստ փախստականների թվի աճող հաջորդականության՝ Վենեսուելա, Սուդան, Սիրիա, Աֆղանստան** **1միավոր**

8. Բացատրել

ա. Չնայած զարգացման բարձր տեմպին և օրենսդրական արգելքներին՝ Չինաստանը շարունակում է մնալ էլեկտրոնային աղբ ներմուծող գլխավոր երկրներից մեկը: Ինչու՞ **1միավոր**

բ. Ինչու՞ է եգիպտացորենի արտադրությունը վերջին երկու տասնամյակում ավելի արագ աճում, քան այլ հացահատիկայիններինը: **1միավոր**

9. Դիտարկեք միտումը և պատասխանեք հարցերին

Ստորև Երևանի Զվարթնոց միջազգային օդանավակայանի սպասարկած ուղևորների թվաքանակներն են 2015-2025թթ. ժամանակահատվածի համար:

	Տարեթիվ										
	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022	2023	2024	2025
Ուղևորների քանակ (մլն մարդ)	2,045	1,88	2,105	2,448	2,691	0,791	2,278	3,650	5,330	5,248	5,616






ա. Կառուցել սպասարկված ուղևորների թվաքանակի սյունաձև տրամագիրը **(0.5միավոր)** և որոշել 2020-2025թթ. ժամանակահատվածում տեղի ունեցած հարաբերական աճը **(0.5միավոր)**:

բ. Ներկայացրեք վերջին տարիներին գրանցված աճի երկու պատճառ **(1միավոր)**:

10. Բացատրել հասկացությունը և պատասխանել հարակից հարցերին

Ի՞նչ է շրջանաձև (շրջանառու) տնտեսությունը **(0.5միավոր)**: Ինչո՞վ է տարբերվում տնտեսության վարման գծային մոդելից **(0.5միավոր)**: Ի՞նչ հայեցակարգի իրագործմանն է միտված շրջանաձև տնտեսությունը **(0.5միավոր)**: Ինչու՞ է այն հիմնականում իրականացվում զարգացած երկրներում **(0.5միավոր)**:

11. Երկրների օվկիանոսային ձկնորսության (տոննա) տրամագրերը համապատասխանեցնել քարտեզում նշված երկրներին (օր.՝ Ա-4) **2 միավոր**



Առարկայական հանձնաժողովի նախագահ՝ Վ.Ասատրյան